<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում քննադատական մտածողության զարգացումը համագործակցային մեթոդների միջոցով

ԱՌԱՐԿԱ – Հասարակագիտություն

ՀԵՂԻՆԱԿ – Նորայր Համբարձումյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Գագարինի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……3

2. Ինչ է քննադատական մտածողությունը……5

3.Քննադատական մտածողությունը և դասավանդման համագործակցային մեթոդները……8

4. Եզրակացություն……16

5. Օգտագործված գրականության ցանկ……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության արդունավետության բարձրացման գործում բավակին մեծ է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառությունը: Իսկ դասավանդման գործընթացում ուսուցչի դերակատարությունը ևս ենթակա է լուրջ փոփոխության. ի տարբերություն դասավանդման ավանդական մոդելի, այժմ ուսուցիչը դառնում է առաջնորդ՝ նպաստելով սովորողների ինչպես գիտելիքների, այնպես էլ անձնային, աշխարհայացքային, արժեքային բազմաբևեռ զարգացման ճանապարհին: Մյուս կողմից, սովորողը դադարում է <<աշխատանքային օբյեկտ>> լինելուց և վերածվում է կրթական գործընթացի ակտիվ մասնակցի: Եվ որպես անխուսափելի հետևանք առաջանում են հետևյալ հրատապ խնդիրները. ինչպես կազմակերպել դասապրոցեսը, ինչպես այդ բազմամակարդակ պրոցեսում սովորողին դարձնել ակտիվ մասնակից՝ ապահովելով սովորողի իմացատրամաբանական, անձնային, սոցիալական և այլ կարողունակությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը: Սովորողը լոկ գիտելիքների կրողից վերածվում է հետազոտողի, ուսումնասիրողի, քննադատողի, բացահայտողի, սովորեցնողի, համագործակցողի: Այս խնդիրների լուծման համար առանցքային դեր են խաղում դասավանդման համագործակցային մեթոդների նպատակային կիրառումը: <<Հասարակագիտություն>> առարկայի առանձնահատ-կություններից ելնելով թեմաներին համահունչ մեթոդների օգտագործումը ոչ միայն կարող է լավագույն ձևով լուծել արծարծված խնդիրները, այլև սովորղի մեջ առաջացնել հետաքրքրասիրություն, դրական տրամադրվածություն և նախապաշարում ուսուցման նկատմամբ: Ինչպես <<Հասարակագիտություն>> առարկայի փորձնական չափորոշիչում է ամրագրված՝ <<Հասարակագիտություն>> առարկայի նպատակն է՝ ձևավորել ժողովրդավարության հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մասնակցող և սոցիալապես պատասխանատու քաղաքացի: Առարկան սովորողին հասարակական գործընթացներն ուսումնասիրելու, դրանց մասին ***քննադատական մոտեցում*** ձևավորելու և սեփական դիրքորոշում ունենալու հնարավորություն է տալիս:

Մեր օրերում կիրառվում են դասավանդման հարյուրավոր համագործակցային մեթոդներ ու հնարներ: Հաճախ դրանք ենթարկվում են զանազան ադապտացիաների՝ պայմանավորված տարիքային, առարկայական, մշակութային և այլ գործոններով: Ուսոցիչը լինելով ազատ մեթոդների ընտրության հարցում, այնուամենայնիվ, պետք է կարողանա ընտրել և կիրառել ուսումնասիրվող թեմային լավագույն կերպով համապատասխանող մեթոդներ և հնարներ: Դրա համար ուսուցիչը պետք է կարողանա հմտորեն տիրապետել որոշ մեթոդների անցկացման տեխնիկային, հաշվի առնելով թեմայի

կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները, դրանցից ընտրել այն մեթոդները և հնարները, որոնք կապահովեն առավելագույն արդյունավետություն:

Ուսուցչի կարևորագույն աշխատանքներից մեկը դա դասարանի և դասարանում սովորող աշակերտներին անհատական հոգեբանական առանձնահատկությունների բացահայտումն է: Ճիշտ և նպատակային ընտրված մեթոդները ոչ միայն կարող են նոր նյութի յուրացումը դարձնել ավելի արդյունավետ, այլև նպաստել սովորողների աշխարհայացքի, հետաքրքրությունների, քննադատական և ստեղծագործական մտածողության և անձնային այլ որակների զարգացմանը:

Ի՞ՆՉ Է ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Քննադատական մտածողության մասին բավականին հիմնավոր ձևով խոսել է հույն փիլիսոփա Սոկրատեսը մեզանից դեռ 2500 տարի առաջ: Հունարեն κριτικός (կրիտիկոս) բառը արտահայտում է ընդունակություն դատելու, դատողություններ անելու և ըմբռնելու իմաստները: Սոկրատեսը գտնում եր, որ գիտելիքն ու իմացությունը չի կարելի կապել հեղինակության հետ: Ըստ նրա գուցե ինչ-որ մեկն ունի իշխանություն և բարձր դիրք, բայց նա միաժամանակ կարող է լինել բավականին մոլորված կամ սխալված: Նա պնդում էր, որ որպիսի մարդն ունենա բարի կյանք և արժանավոր ապրելակերպ, նա պետք է կարողանա քննադատական հարցեր տալ և պետք է ունենա հարցադրման ոգի: Նա ասում էր, որ մինչև գաղափարների արժանահավատ համարելը, պետք է խորքային հարցերի միջոցով բազմակողմանիորեն ստուգել մտքերը: Նա կարևորում էր փաստերը և ապացուցները, պատճառների հետևողական քննումը և եզրահանգումը, հիմնական կոնցեպցիաների վերլուծությունը՝ ոչ միայն խոսքի, այլև նաև պրակտիկայի հիման վրա: Իր հարցադրումների մեթոդն այսօր հայտնի է <<սոկրատեսյան հարցադրումներ>> անվանմամբ: Իր հարցադրումների հիմքում նա դնում էր մտածողության հստակությունը և արժանահավատությունը: Նա մարդկանց տալիս էր հարցեր՝ բացահայտելու նրանց սխալ մտորումները կամ արժանահավատ գիտելիքների պակասը: Սոկրատեսի մեթոդը հիմնված էր հարցադրումներ առաջ քաշելու վրա, որոնց միջոցով, բավականին հետևողականորեն, նա հանգում էր եզրահանգումների, միժամանակ հենվելով փաստերի և առողջ մտահանգումների վրա: Հետագայում Պլատոնը արձանագրում է Սոկրատեսի ուսմունքները և շարունակում է քննադատական մտածողության ավանդույթը: Հետագայում Արիստոտելը և սկեպտիկ իմաստասերները կատարելագործեցին Սոկրատեսի ուսմունքները՝ հանգելով համակարգային մտածողությանը՝ հարցադրումների միջոցով բացահայտելով իրականության ճշմարիտ բնությունը՝ երևութային կողմից անցնելով էութենական կողմին: Հետագայում քննադատական մտածողության վերաբերյալ բավականին լուրջ ուսումնասիրություններ են կատարվել իմաստասերների, քաղաքագետների, հոգեբանների, մանկավարժների կողմից: Մեր օրերում քննադատական մտածողության հարցերով զբաղվող հասատություններից է Քննադատական մտածողության հիմնադրամը (Foundation for Critical Thinking), որն իր պաշտոնական կայքում ներկայացնում է իր նպատակները. <<… նպաստել կրթական բարեփոխումներին: Մենք փորձում ենք բերել էական փոփոխություններ կրթության և հասարակության մեջ՝ զարգացնելով արդարամիտ քննադատական մտածողությունը: Քննադատականմտածողությունը էական է, եթե մենք ուզում ենք հասնել մեր խնդիրների արմատներին և հասնել խելամիտ լուծումների>>: Քննադատական մտածողությունն իր

մեջ ներառում է հետևյալ առանցքային գաղափարները. խնդրի հստակ սահմանում, նպատակի հստակ սահմանում, հարցադրում ուղղված խնդրին, ենթադրություն, պատճառահետևանքային կապով եզրահանգում: Քննադատական մտածողությունը կազմում է միասնական համակարգ մտածողության այլ մոդելների հետ՝ գիտական մտածողություն, մաթեմատիկական մտածողություն, պատմական մտածողություն, անթրոպոլոգիական մտածողություն, տնտեսագիտական մտածողություն, բարոյագիտական մտածողություն և փիլիսոփայական մտածողություն: Սակայն այն ընդամենը սիլոգիզմի վրա կառուցված մտահանգումների շարք չէ հիմնված փաստերի և իրողությունների վրա, այն արտացոլում է նաև մտածողի անհատական կողմերը, նրա ինտելեկտուալ կարողություններն ու հմտությունները, դրդապատճառները, արժեքներն ու շահերը: Այդ իսկ պատճառով, այն լինելով բավականին արդյունավետ, միևնույն ժամանակ մնում է ոչ ունիվերսալ, հետևաբար յուրքանչյուր սովորող կարող է ցուցաբերել քննադատական մտածողություն այս կամ այն չափով, իսկ դրա զարգացում է ընթանում է մարդու ողջ կյանքի ընթացքում: Կայքի հոդվածներից մեկում այսպիսի գծապատկերով է ներկայացված քննադատական մտածողության էությունը.



Իսկ ավստրալիական Մոնաշ համալսարանի (Monash University) պաշտոնական կայքում գտնում ենք քննադատական մտածողության մասին հետևյալը.

քննադատական մտածողությունը մտածողության մի տեսակ է, որը ներառում է հարցադրումը, վերլուծությունը, մեկնաբանումը, գնահատումը և անում է

դատողություններ մեր կարդացածի, լսածի, ասածի կամ գրածի վերաբերյալ: Լավ քննադատական մտածողությունը դա հավաստի դատողություններ անելն է՝ հիմնված հավաստի տեղեկության վրա:

Նրանք առանձնացնում են քննադատական մտածողության մեջ 6 կարևոր կողմեր.

1. մտածողության նպատակի հստակեցում,
2. ինֆորմացիայի աղբյուրների դեմ հարցադրում,
3. փաստարկների ճշգրտում,
4. աղբյուրների և փաստարկների վերլուծություն,
5. այլ փաստարկների գնահատում,
6. սեփական փաստարկների ստեղծում կամ ձևավորում:

Բոլոր դեպքերում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ քննադատական մտածողությունը բացասական կողմերի կամ սխալների վրա կենտրոնանալը չէ, այլ այն ենթադրում է մտքի թռիչք, որը բերում է խնդրի էութենական նոր կողմերի բացահայտմանը, մեկնաբանմանը և գուցե ոչ ստանդարտային լուծումների առաջադրմանը:

Ի. Վ. Մուշտավինսկայան իր << Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան դասավանդելիս և ուսուցչի նախապատրաստման համակարգում >> աշխատության մեջ ներկայացնում է, որ ամերիկյան Ժողովրդավարական մանկավարժության կոնսորսիումի և Միջազգային ընթերցանության ասոցիացիայի և ռուս մանկավարժների մշակած <<Ընթերցանությունը և գրավոր խոսքը քննադատական մտածողության զարգացման համար>> տեխնոլոգիան իր մեջ ներառում է երեք փուլեր.

Խթանում – evocation (խթանում, հրահրում)

Նոր ինֆորմացիայի իմաստավորում – realization (գիտակցում, ըմբռնում, իրացում)

Անդրադարձ – reflection (դիտարկում, արտացոլում):

Խթանման փուլի նպատակը միայն սովորողին ակտիվացնելը, նրան հետագա աշխատանքին մոտիվացնելը չէ, այլ արդեն ունեցած գիտելիքների խթանումը, վեր հանումը՝ կախված ուսումնասիրվող հարցի հետ, որն էլ դառնում է հետագա աշխատանքների համար ակտիվացնող և մոտիվացնող գործոն: Երկրորդ փուլում սովորողը ընթերցանության և գրավոր խոսքի միջոցով անմիջականորեն աշխատում է ինֆորմացիայի հետ՝ ընկալելով և իմաստավորելով ընթերցածը կամ լսածը: Երրորդ

փուլում ինֆորմացիան վերլուծվում, մեկնաբանվում և ենթարկվում է ստեղծագործական վերամշակման:

Այս տեխնոլոգիայի հիման վրա է ՀՀ-ում հանրակրթության մեջ կիրառվել ԽԻԿԱ դասավանդման մոդելը: Ի.Վ. Մուշտավինսկայան նաև ասում է, որ քննադատական մտածողությունը վերանայող գնահատող մտածողություն է: Սրա առանձնահատկություններն են. բաց միտքը, տեքստի նկատմամբ խոհական վերաբերմունքը, երևույթները տարբեր տեսանկյուններից դիտարկելու ընդունակությունը: Քննադատական մտածողության ընդունակությունների զարգացումը հնարավորություն է տալիս ձևավորել կրթության սեփական ուղին՝ առանձին թեմաներ ուսումնասիրելիս, առանձին խնդիրներ լուծելիս: Արդյունքում, սովորողը աճում է անձնապես և անհատականորեն, զարգանում է նրա հաղորդակցության կուլտուրան, գիտակցում է սեփական աշխատանքի արժեքը և այլն:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Քննադատական մտածողությունը լինելով ստեղծագործական երևույթ կարող է և պետք է զարգանալ: Դպրոցում համապատասխան համագործակցային մեթոդների և հնարների նպատակային կիրառումը կարող է նպաստել սովորողների մոտ քննադատական մտածողության զարգացմանը: Քանի որ քննադատական մտածողությունը կապված է փաստարկների հետ, սովորողները պետք է կարողանան հարցադրումներով վերհանել և քննադատել առկա տեսակետների թերի կամ սխալ կողմերը, միաժամանակ ներկայացնելով սեփական մոտեցումները:

Մենք առանձնացրել ենք այն համագործակցային մեթոդները, որոնք կարող են զարգացնել սովորողների քննադատական մտածողությունը: Մեթոդներ, որոնք թույլ կտան սովորողներին

1. տեսնել իմացածի և դեռևս չիմացածի անջրպետը,

2. զարգացնել համակարգելու, վերլուծելու, վերանայելու, համեմատելու և հակադրելու կարողությունները,

3. վեր հանել առաջադրված դրույթների թերի կամ սխալ կողմերը,

4.ձևակերպել սեփական մոտեցումներ և խնդիրների լուծման տարբերակներ:

Քննադատական մտածողությունը լինելով ստեղծագործական երևույթ կարող է և պետք է զարգանալ: Դպրոցում համապատասխան համագործակցային մեթոդների և հնարների նպատակային կիրառումը կարող է նպաստել սովորողների մոտ քննադատական մտածողության զարգացմանը:

Թերևս արդյունավետ մեթոդներից մեկը լավ տարածված <<Ուղեղային գրոհն>> է: Այս մեթոդը, որը նաև հայտնի է մտագրոհ կամ մտատարափ անունով, ստեղծվել է Ալեքս Ֆ. Օսբորնի կողմից 1939թ. կոմպանիաների համար արդյունավետ գովազդում կազմակերպելու համար: Հետագայում մեթոդը լայն կիրառություն է ստացել կրթության ոլորտում: Մեթոդի նպատակն է գաղափարների գեներացման խթանումը: Այս մեթոդը կիրառելիս մասնակիցներին ներկայացվում է խնդիրը, խնդիրը ներկայացնելուց և բացատրելուց հետո մասնակիցները հերթով ասում են իրենց գլխում ծագած մտքերը, ասոցիացիաները: Մտքերը չեն քննարկվում, վերլուծվում կամ քննադատվում, խրախուսվում է ցանկացած ծագած մտքի ներկայացումը: Բոլոր մտքերը գրի են առնվում, ապա կատարվում է մտքերի խմբավորում և լավագույն գաղափարը առանձնացվում է: Այս մեթոդի ժամանակ պետք է հետևել հետևյալ կանոնները. արտահայտել որքան հնարավոր է շատ մտքեր ու գաղափարներ, ասել գլխում ծագած ցանկացած միտք, մտքերը ասել հնարավորինս հակիրճ, ապա քննարկել յուրաքանչյուր միտք, ընտրել լավագույնը: Այս մեթոդը ի տարբերություն իր պարզ տեխնիկային, կարող է սովորողների մոտ զարգացնել քննադատական մտածողությունը: Երբ մասնակիցները ծագած ինքաբուխ գաղափարները սկսում են քննարկել, սովորողները կարող են քննադատել, մեկնաբանել, լրացնել, մերժել առաջադրված գաղափարները: Մեթոդը թեման դարձնում է ավելի գրավիչ, խթանում է դասապրոցեսին սովորողի մասնակցությանը, զարգացնում է երեխայի մտքի ճկունությունը, ստեղծագործական և պատկերավոր երևակայության զարգացմանը: Մեթոդը միաժամանակ հնարավորություն է տալիս սովորողներին ճանաչել միմյանց՝ ուրիշների գաղափարները, տեսանկյուններն ու պատկերացումներ, համեմատել սեփական մոտեցումները մյուսների մոտեցումների հետ, և վերջապես, խմբային քննարկումների արդյունքում գալ լավագույն եզրահանգման: Գոյություն ունի <<Ուղեղային գրոհ>> մեթոդի տարածված շատ տարատեսակներ: Դրանցից է <<Անվանական խմբային տեխնիկան>>, որի ժամանակ ուսուցիչը սովորողներին բաժանում է թղթեր՝ հանձնարարելով գրի առնել սեփական մտքերը, սակայն սովորողները չպետք է նշեն իրենց անունները: Հետո ուսուցիչը արտահայտած յուրաքանչյուր միտք դնում է խմբային քվեարկության: Այս փուլը կոչվում է զտում: Զտումից հետո մեծ հավանություն ստացած մտքերի համար կրկին կիրառվում է մտագրոհը: Քննարկումները կարող են անցկացվել խմբով կամ ենթախմբերով:

<<Ուղեղային գրոհ>> մեթոդի կիրառման օրինակներ: 8-րդ դասարան, թեմա – Մարդու պահանջմունքները: Ուսուցիչը ներկայացնում է սովորողներին, որը ուսումնասիրվելիք թեման վերաբերվում է մարդու պահանջմունքներին և դրանց տեսակներին: Ուսուցիչը հպանցիկ ձևով բացատրում է, որ պահանջմունքները մարդու կենսագործունեության համար կարևոր և անհրաժեշտ կարիքներն են: Նա տեղեկացնում է, որ կիրառվելու է մտագրոհը, և ցանկալի է որքան հնարավոր է շատ գաղափարների արտահայտում է: Գրատախտակի մոտ կանչվում է սովորողներից մեկը (կամ էլ գրառումը կատարում է ուսուցիչը), կենտրոնական մասում գրում է <<պահանջմունք>> արտահայտությունը և սկսվում է մտագրոհը: Ենթադրենք սովորողների ներկայացրած գաղափարները սրանք են. պահանջ, պարտադրել, անհրաժեշտություն, պետք է անել, օրենք, կարգ ու կանոն, պարտադրանք, հագուստ, կարևոր բան, խաղալիք, զայրույթ և այլն: Այս փուլից հետո սովորողները սկսում են քննարկել յուրքանչյուր գաղափարի առնչությունը թեմայի հետ: Օրինակ՝ պահանջ – Սովորողներից մեկը գուցե ասի՝ պահանջը կարող է լինել անհրաժեշտ կամ հրատապ արարք, վարք, գործողություն, իսկ մեկ ուրիշը կամ ուսուցիչը կարող է ուղղորդել՝ պահանջը ավելի շատ արտաքին երևույթ է, մինչդեռ պահանջմունքը առնչվում է անձի անհատական, անձնային կողմին: Այս պես քննարկվում են յուրքանչյուր գաղափար: Սովորողները ունենում են ազատ հնարավորություն ոչ միայն իրենց կարծիքները արտահայտելու, այլև քննադատելու, ներկայացված մտքերի անհամապատասխանությունը փաստելու համար: Մեթոդի վերջում արվում է եզրահանգում՝ այսպիսով պահանջմունքները մարդու կենսագործունեության և զարգացմանա համար անհրաժեշտ կարիքներն են, որոնք դառնում են մարդու գործունեության համար դրդապատճառներ: Պահանջմունքները լինում են կենսաբանական … և այդպես շարունակ:

<<Ուղեղային գրոհը>> արդյունավետ ձևով կարող է կիրառվել 8-րդ դասարանի <<Հասարակագիտություն>> առարկայի այս թեմաների համար. Համագործակցություն, հակասություն և համակեցություն (համագործակցություն, հակասություն, համակեցություն հասկացություններից ցանկացած մեկի կամ բոլորի համար), Ընտանիք, ազգ, մշակույթ (ընտանիք, ազգ, մշակույթ հասկացություններից ցանկացած մեկի կամ բոլորի համար), Հիմնարար արժեքներ, Ազատություն, Ինչ է արդարությունը, Հավասարություն, Պատասխանատվություն, Ժողովրդավարություն:

Հաջորդ մեթոդը, որը ևս կարող է խթանել սովորողների քննադատական մտածողության զարգացմանը, դա <<Փնջային մեթոդն>> է (cluster – փունջ, ցանց, ողկույզ): Սա սկզբում կիրառվել է մարդաբանության և հոգեբանության մեջ երևույթների խմբավորման, դասակարգման նպատակով: Սակայն որոշ փոփոխություններից հետո այն իր

կիրառությունն է գտել ուսուցման ոլորտում: Այս մեթոդը համարվում է մտագրոհի տարատեսակներից: Այն հնարավորություն է տալիս սովորողների մտածողության գործընթացները դարձնել տեսանելի: Մեթոդը իրականացվում է այսպես. գրատախտակին կամ թղթի վրա գրվում է բանալի բառը կամ գաղափարը: Մասնակիցները բանալի բառի շուրջ գրում են դրա հետ կապված ցանկացած միտք, բառ, օրինակ, պատկերացում և այլն: Դրանք միացվում են կենտրոնական մտքի հետ գծերով: Մեկ գաղափարից կարող է բխեցվել մեկ այլ գաղափար: Այս մեթոդի ժամանակ ևս սովորողներին պետք է խրախուսել որքան հնարավոր է շատ գաղափարներ արտահայտել՝ զարկ տալով երևակայությանը, և դրանք պատկերել փոխադարձ կապերով: Արդյունքում ձևավորվում է գաղափարների փունջ, որը պետք է վերլուծել, խմբավորել և դասակարգել և բացահայտել դրանց միջև հնարավոր բոլոր կապերը և հարաբերությունները:

<<Փնջային>> մեթոդի կիրառման օրինակ: Իր բարդությամբ պայմանավորված այս մեթոդը ցանկալի է կիրառել բարձր դասարաններում: Այն արդյունավետ ձևով կարելի է կիրառել 11-րդ դասարանի <<Հասարակագիտություն>> առարկայից Դատական համակարգ թեմայի համար որպես գործնական աշխատանք:



<<Մտածողության վեց գլխարկների>> մեթոդ: Այս մեթոդի հեղինակն է Էդվարդ դե Բոնոն: Նրա մեթոդը նպաստում է ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացմանը: Մեթոդը տալիս է հնարավորություն միևնույն խնդրին նայել տարբեր տեսանկյուններից, հասկանալ ուրիշներին և ուրիշների կարծիքները, կախված հանգամանքներից և իրավիճակային փոփոխություններից փոփոխել մտածողության ուղղվածությունը: Այն դարձնում է համագործակցային աշխատանքը բականին արդյունավետ, մասնակիցները սկսում են ցուցաբերել ընդհանուր նպատակին ուղղված գործողութուններ: Այս մեթոդի շնորհիվ մասնակիցները սկսում են վերհանել խնդիրները, ձևավորել նոր մոտեցումներ և որոշումներ, համակարգել անելիք գործողությունները: Մեթոդը անմիջականորեն խթանում է սովորողների <<զուգահեռային>> մտածելակերպի զարգացմանը: Մեթոդը տալիս է հնարավորություն մասնակիցների միջև առաջացած կոնֆլիկտները մեղմել՝ հասնելով նորարարության: Այս հնարը լավագույն միջոց է զարգացնելու սովորողների արագ կողմնորշվելու, արդյունավետ այլընտրանքային լուծումներ անելու, խնդիրները ավելի հստակ և որոշակի տեսնելու, իրավիճակի այլ կողմերը տեսնել կարողանակու ընդունակությունները: Մեթոդը կիրառվում է այսպես. ուսուցիչը սովորողներին ներկայացնում է քննարկվող թեման: Ապա մասնակիցները հագնում են գլխարկներ: Գլխարկները վեց գույնի են: Յուրաքանչյուր գույնը ենթադրում է որոշակի վերաբերմունք և մոտեցում թեմային: Եվ ըստ այդմ մասնակիցները պետք է ներկայացնեն իրենց մոտեցումները: Սպիտակ գլխարկ կրող անձը պետք է թեմայի վերաբերյալ ներկայացնի փաստարկներ և տեղեկատվություն: Սև գլխարկ կրող անձը ցուցաբերում է քննադատական մոտեցում: Նա իր հերթին բերում է փաստարկներ, որոնցով փորձում է ցույց տալի վատ, թերի, վտանգավոր կողմերը: Կարմիր գլխարկ կրող անձը թեմային վերաբերվում է միայն իր զգացմունքային մոտեցմամբ, ի տարբերություն փաստերի: Կապույտ գլխարկ կրող անձը հանդես է գալիս որպես առաջնորդող: Նա ներկայացնում է քննարկման ուղղությունները և ընթացքը, նպատակները: Դեղին գլխարկ կրողը թեմայի շուրջ ներկայացնում է դրական, լավ կողմերը: Նա հակադրվում է սևին: Կանաչ գլխարկ կրողը քննարկման ժամանակ ներկայացնում է խնդիրները հաղթահարելու առաջարկներ: Սովորաբար հանդես է գալիս կապույտը, սպիտակը, սևը, կարմիրը, դեղինը, կանաչը, թեև հերթականությունը կարող է փոփոխվել:

Գլխարկի գույնը	Իմաստը
Կապույտ	Ղեկավարում
Սպիտակ	Փաստեր և տեղեկություններ

Կարմիր	Հույզեր և էգո
Սև	Բացասական
Դեղին	Դրական
Կանաչ	Նոր գաղափարներ

<<Մտածողության վեց գլխարկների>> մեթոդի կիրառության օրինակներ: Մեթոդը արդյունավետորեն կարելի կիրառել 9-րդ դասարանի Հասարակագիտությունից հետևյալ թեմաների համար. Փոքրամասնության իրավունքներ և սեռային իրավահավասարություն – այստեղ որպես դիտարկվող խնդիր կարելի է ուսումնասիրել հասարակության տարբեր բնագավառներում տղամարդու և կնոջ ավանդական և ներկայում փոփոխվող դերերի մասին, տղամարդկան և կանանց հավասարության և անհավասարության մասին: Ընտրություններ – արդյոք ճիշտ կամ սխալ ընտրությունը կարող է իրականում որոշիչ լինել պետության և բնակչության համար, թե դա կախված է այլ էական գործոններից, հնարավոր է նախորոք կանխատեսել որևէ թեկնածուի ընտրվելուց հետո կատարելիք գործողությունների արդյունավետությունը և ձախողումը: Հանրային քաղաքականություն: Մասնակցություն և առաջնորդություն – այս թեմայում որպես քննարկվող խնդիր կարող է դիտարկվել առաջնորդության անհրաժեշտությունը, անխուսափելիությունը, լինել առաջնորդ, թե հետևորդ, առաջնորդի ամենակարևոր որակները, ինչպես հաղթահարել ձախողումը և այլն:

<<Սոկրատեյան քննարկում>>: Այս հնարի միջոցով հնարավոր է դասարանի բոլոր սովորողներին ներգրավել քննարկմանը: Քննարկումն սկսելուց առաջ ուսուցիչը պետք է նախապատրաստի քննարկման համար նախատեսված հիմնական հարցը կամ հարցերը, ինչպես նաև ենթահարցերը, ընդ որում ենթահարցեր կարող են կազմվել քննարկման ընթացքում: Սովորողները նստում են շրջանաձև՝ ապահովելով միմյանց տեսնելու և լսելու հնարավորությունը: Ուսուցիչը սովորողներից մեկին կարող է նշանակել քննարկման կազմակերպիչ (համակարգող): Կազմակերպչի նշանակումը կարող է կատարվել ընտրությամբ, կամ յուրքանչյուր քաննարկման ժամանակ նշանակելով սովորողներից մեկին հերթականությամբ: Սովորողները հարցին պատասխանում են հերթականությամբ, կամ ձեռք բարձրացնելով: Կազմակերպիչը սահմանում է յուրաքանչյուրի պատասխանի տևողությունը (կախված սովորողների քանակից՝ 1-2 րոպե), յուրքանչյուրին տրվում է 1 կամ 2 պատասխանի հնարավորություն: Յուրքանչյուր հաջորդ պատասխանը պետք է բխի նախորդից՝ լրացնի կամ քննադատի այն: Քննարկման ավարտին բոլորի հնչեցրած կարծիքները ամփոփում է կազմակերպիչը:

<<Սոկրատեսյան քննարկումների>> կիրառության օրինակներ: Քանի որ քննարկումների անցկացման համար խիստ կարևոր է, որ սովորողները քննարկվող հարցերի վերաբերյալ ունենան տեղեկություններ, փաստարկներ և գիտելիքներ, նապատակահարմար է այն կիրառել բարձր դասարաններում և սովորողների համար ծանոթ թեմաների համար: 12-րդ դասարանի <<Հասարակագիտությունից>> կարելի կիրառել այս թեմաների համար. Փիլիսոփայության առարկան, փիլիսոփայության ուսումնասիրության անհրաժեշտությունը – որպես քննարկման սկզբնական հարցեր կարելի է օգտագործել դասի մեջ առաջ քաշված հարցերը՝ ինչու է անհրաժեշտ փիլիսոփայություն սովորել, ովքեր են փիլիսոփաները և ինչով են զբաղված, դու սիրում ես փիլիսոփայել: Դիցաբանական, կրոնական և փիլիսոփայական աշխարհայացք – ինչ է աշխարհայացքը, ինչպես է ձևավորվում աշխարհայացքը: Գոյաբանություն, իմացաբանություն, ինչն է իրական – ինչն է իրական, որոնք են իրականության չափանիշները, ինչպես կարող ենք ճանաչել իրականությունը: Ճշմարտության հիմնահարցը – արդյոք համակարգիչները մտածում են, հնարավոր է ստեղծել արհեստական ինտելեկտ: Մարդու հիմնախնդիրը – ով է մարդը, որոնք են մարդ էակին բնութագրող հիմնական հատկությունները:

<<Էսսեներ>>: Էսսեն իրենից ներկայացնում է ազատ տեքստային շարադրանք, որը բովանդակությամբ կարող է լինել գրական, բարոյագիտական, պատմական, փլիսոփայական և այլն: Եվրոպական երկրներում էսսեները շատ լայն կիրառություն ունեն կրթության բնագավառում: Էսսեները սովորաբար ոչ մեծ ծավալի գրավոր ստեղծագործություններ են, սակայն գոյություն ունեն էսսեների որոշ չափանիշներ. հատկացված ժամանակահատված, ներքին տրամաբանական կառուցվածք, դրույթների կամ վարկածների, փաստարկների և եզրահանգումների առաջ քաշում: Այն միաժամանակ լինելով գրական ստեղծագործության տեսակ, ենթադրում է նաև գրական գեղարվեստական ընդունակությունների դրսևորում: Դասարանում էսսեներ գրելու համար ուսուցիչը կարող է տրամադրել 5-10 րոպե, բայց ավելի ծավալուն և բովանդակալից աշխատանքի դեպքում դա կարելի է հանձնարարել որպես տնայյին աշխատանք: Եթե սովորողները երբևէ չեն գրել վերլուծական էսսեներ, ապա ուսուցիչը պետք է ներկայացնի էսսե գրելու չափանիշները: Հաճախ սովորողները շփոթում են էսսեն շարադրության հետ: Որպես կանոն էսսեն պետք է ունենա նախաբան, միջնամաս և վերջաբան: Այն պետք է բաղկացած լինի առանձին պարբերություններից, որոնք միմյանց հետ պետք է լինեն տրամաբանորեն կապված, սովորաբար <<այդ պատճառով>>, <<հետևաբար>>, <<այսպիսով>> և այլ տրամաբանական արտահայտությունների միջոցով: Սովորողներին

ավելի մատչելի դարձնելու համար կարելի է նրանց ներկայացել պատրաստի մի էսսեի օրինակ և դրա միջոցով բացատրել:

Էսսեի նախաբանը կամ ներածական մասի առանձնահատկությունն այն է, որ այստեղ միտքը ընդհանուրից պետք է գնա մասնավորի: Այն կարող է սկսվել պարզ քննարկվող մի թեմայից կամ մեկ-երկու ընդարձակ նախադասություններից: Ապա պետք է առաջ քաշվի հարցադրում՝ ենթադրական վարկածով, որից հետո պետք է <<գծվի ընթացիկ քարտեզը>>: Երկրորդ հատվածը, որը կոչվում է միջնամաս (body - մարմին), իր մեջ պետք է պարունակի առանձին հատվածներ, որոնք իրենցից պետք է ներկայացնեն փաստարկի կառուցվածքային հատվածներ: Դրանք կարող են ներկայացնել քննարկվող թեմայի վերաբերյալ հարց և պատասխան, մեր ունեցած տեղեկությունները և գիտելիքները, ապացույցներ, որոնք հաստատում են մեր վարկածները, թեմային վերաբերող օրինակներ և արժանահավատ հեղինակներից մեջբերումներ: Եթե միջնամասում մեկի փոխարեն կան երկու կամ ավել հարց, ապա յուրաքնչյուր հարցի համար պետք է պահպանել նկարագրված կառուցվածքը: Եվ վերջապես վերջին փուլում, որը կոչվում է վերջաբան կամ եզրահանգում, միտքը պետք է ընթանա մասնավորից դեպի ընդհանուրին: Այստեղ պետք է վերահաստատել խնդրին տրված պատասխանը, պետք է հաստատվի գլխավոր դրույթը: Սակայն, այս հատվածում, չի կարելի ներկայացնել նոր ինֆորմացիա կամ գաղափար, այլ պետք է հանգել վերջնական հանրագումարի: Էսսեի միջմանասում եղած հատվածները բացկացած են նախադասությունների խմբերից, որոնք զարգացնում են մեկ գլխավոր միտքը: Այդ հատվածները բաղկացած են ա. հիմնական միտքն արտահայտող պնդումից, բ. օժանդակ նախադասություններից, որոնք բացատրում կամ զարգացնում են հիմնական միտքը, գ. փաստարկներից, որոնք կարող են լինել ապացույցներ, գիտական փաստեր, որոնք պետք է հաստատեն մեր առաջ քաշած տեսակետը, դ. վերլուծությունից, որը արվում է փաստարկները ներկայացնելուց հետո այդ փաստարկների հիման վրա և ե.եզրահանգող նախադասությունից, որը վերահաստատելու է առաջ քաշված տեսակետը:

<<Էսսեների>> կիրառության օրինակ: Կարելի է կիրառել 9-րդ դասարանի <<Առաջնորդություն>> թեմայի համար՝ հետևյալ կետերով.

1. Ինչ է առաջնորդությունը: (Պետք է տալ երևույթի սահմանումը և նկարագրությունը):
2. Արդյոք առաջնորդ ծնվում են: (Սա լինելու վարկածը, որը պետք է հաստատել կամ ժխտել):

3. Փաստարկ: (<<Կա կարծիք, որի համաձայն առաջնորդ ծնվում են: Սակայն ես գտնում եմ, որ առաջնորդ չեն ծնվում, այլ դառնում են, քանի որ …: Այս փաստը հաստատում են …>>):

4. Եզրակացություն: (<<Այսպիսով, փաստերը ցույց են տալիս, որ …>>):

Ուսուցիչը կարող է սովորողներին տալ Ջեյմս Սվանսոնի <<Առաջնորդներ չեն ծնվում, յուրքանչյուրը կարող է զարգացնել առաջնորդության հմտություններ>> հոդվածը առաջնորդության մասին՝ հանձնարարելով վերոհիշյալ հոդվածից դուրս բերել առանցքային պնդումները և դրանք կիրառել էսսեում՝ վարկածները հաստատելու կամ ժխտելու համար: Հոդվածագրի առաջ քաշած առանցքային պնդումներն են. ա/ բնածին առաջնորդության հմտությունները կախված չեն սեռից, բ/ կան առաջնորդության տարբեր աստիճաններ. մեծ, փոքր, միջին, գ/ առաջնորդության գործունեությունը գենետիկական և միջավայրային գործոնների համակցված ամբողջություն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային մասշտաբների հասնող հասարակական փոփոխությունները, մարդկային արժեքների և մտածելակերպի հարմարեցումը արդի ժամանակաշրջանի մարտահրավերներին և կրթական բնագավառի նոր հայեցակարգը ենթադրում են ուսուցման նոր մեթոդների կիրառում դասավանդման ընթացքում: Հանրակրթական դպրոցներում <<Հասարակագիտություն>> առարկան լինելով հասարակագիտական մի քանի գիտությունների համախումբ, պետք է դասավանդվի այնպիսի փոխներգործուն մեթոդների և հնարների կիրառմամբ, որոնք միանշանակորեն կնպաստեն սովորողների քննադատական մտածողության զարգացմանը: Քանի որ <<Հասարակագիտություն>> առարկայի ուսումնասիրումը համընկնում է դեռահասության տարիքին, այդ իսկ պատճառով պետք է հաշվի առնել, որ այդ տարիքում երեխաների մոտ սկսում է զարգանալ ռեֆլեքսիվ և վերբալ-տրամաբանական մտածողությունը: Հետևաբար, այս տարիքի սովորողները հակված են իրենց տեսածը և լսածը ենթարկել հիպոթետիկ վերլուծությունների: Նրանց համար չափազանց հետաքրքիր և գրավիչ են ինտելեկտուալ առաջադրանքներ պարունակող հանձնարարությունները, իսկ ավանդական <<կարդալ-պատմել>>, <<ներկայացնել>>, <<նկարագրել>> և նմանատիպ առաջադրանքները սովորողների մոտ առաջացնում են ձանձրույթ և չեն նպաստում իմացական կարողությունների զարգացմանը: Դեռահասները սիրում են երևույթները վերլուծել, համեմատել, բացահայտել ընդհանրությունները, գտնել երևույթների միջև առկա պատճառահետևանքային կապերը, անել եզրահանգումներ: Դեռահասության

հոգեբանական առանձնահատ-կություններից են նաև անձի հուզակամային որակների զարգացումը և կայունացումը, ինքնարտահայտման, ինքնադրսևորման պահանջմունքների ինտենսիվ բավարարումը:

Եթե նախկինում դասավանդման հիմնական նպատակն էր գիտելիքների հաղորդումը ուսուցչի կողմից՝ դասագրքի միջոցով, ապա նոր հայեցակարգի համաձայն դասավանդման ընթացքում իրականացվում են մի քանի նպատակային գործընթացներ, որոնցից կարևորագույներն են սովորողի անձի բազմակողմանի ձևավորումը և զարգացումը և համապատասխան կարողունակությունների ձևավորմամբ վրջնարդյունքներին հասնելը: Այստեղ կարևորվում է դասավանդման նպատակային մեթոդների և հնարների ընտրությունը: Մեր օրերում շրջանառվում են մեծ թվով համագործակցային մեթոդներ, որոնց ընտրությունը և կիրառումը <<Հասարակագիտություն>> առարկայի դասաժամերին կարող է առավելագույն ձևով նպաստել ակնկալվող վերջնարդյունքներին հասնելը: Մեթոդների ընտրության հարցում, ինչ խոսք, մեծ դեր են խաղում ուսուցչի մանկավարժական վարպետությունը և դասանյութի նախապես արդյունավետ պլանավորումը: Կան մեթոդներ, որոնք հնարավոր են կիրառել գրեթե բոլոր թեմաների դեպքում (օրինակ՝ <<Մտագրոհ>> մեթոդը), բայց կան մեթոդներ, որոնց կիրառումը հնարավոր է ոչ բոլոր թեմաների համար: Բացի այս, պետք է հաշվի առնել ևս մի քանի կաևոր հանգամանքներ. դասի որ հատվածում որ մեթոդը կարող է լինել նպատակային, ինչ կոնկրետ նպատակներ ունի ուսուցիչը:

Մեր կատարած վերլուծական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սովորողների մոտ քննադատական մտածողության զարգացման բավականին բարձր արդյունավետություն կարող են ապահովել <<Ուղեղային գրոհ>>, <<Փնջային>>, <<Մտածողության վեց գլխարկներ>>, <<Սոկրատեսյան քննարկում>>, <<Էսսեներ>> մեթոդները: Այս մեթոդների կիրառումը կարող է նպաստել սովորողների մոտ համակարգելու, վերլուծելու, վերանայելու, համեմատելու, հակադրելու, խնդրի համար նոր լուծումներ առաջ քաշելու, մյուսների հետ համագործակցելու, մյուսներին ապրումակցելու և հասկանալու ընդունակությունների և հմտությունների ձևավորմանը և զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Հասարակագիտություն>> առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագիր, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 30.04.2021թ. հր. 19-Լ-ի հավելված

2.Технология развития критического мышления на уроке и в системе подготовки учителя, И. В. Муштавинская, Санкт-Петербург, 2003

3. Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Երևան, 2001

4. Գիրք պատմության ուսուցման, ինչու, ինչպես, <<Պարադիգմա>> կրթական հիմնադրամ, 2020

5. Six thinking hats: an essential approach to business management, 1985, Edward de Bono (տես պաշտոնական կայքը՝ https://www.debono.com)

6. The teaching of creative thinking, Edward de Bono, 2018

7. https://www.monash.edu

8. https://en.wikipedia.org/wiki/Critical_thinking

9. https://www.criticalthinking.org

10.https://atton-institute.com/news-and-publications/leaders-are-not-born-every-person-can-develop-leadership-skills.html